№ 59 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 15

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 15 № 59

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Կարապետ և Մատիւղա Խանդուլեանցները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց քրոջորդի՝ անմոռանալի

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՅԱԿՈԲԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 12-ին։ Յուղարկաւորութիւնը՝ շաբաթ մարտի 15-ին, հանգուցեալի բնակարանից (Ելիզավէտինսկայա փող. № 17) դէպի Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցին, (Վօրոնցօվի արձանի մօտ) և այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։

Մարգարիտ, Սօնիչկա, Յովհաննէս, Անանիա, Պաւլի, Զաւվարդ Աղասեանները և Նուբար Բաղդասեանը յայտնում են իրանց բարեկամներին ու ծանօթներին՝ առաջինը իր անմոռանալի որդու, երկրորդը իր տէքօր, երրորդները իրանց եղբօր և վերջինը իր հօրեղբօրորդու՝ հանգուցեալ

Ներսէս Կոստանդեան ԱՂԱՍԵԱՆՑԻ

մահվան տարեդարձի առիթով կիրակի, 16 մարտի, տեղի կունենայ պատարագ և հոգեհանգիստ Վանքի մայր եկեղեցում։ Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը 12-ին։

ՀԱԿԱՌԱԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

—

Ազատագրական շարժումից առաջ, երբ մարդիկ կանգ էին առնում հասարակական ցաւերի, տնտեսական ազէտների և առհասարակ պետական կազմալուծված գործերի քննութեան վրա, նրանք ամեն օր աւելի ու աւելի էին համոզվում, որ հին ըէժիմը դարձել է անտանելի և որ նրա փոփոխութեան անհրաժեշտութիւնը դարձել է անհերքելի։

— Այսպէս ապրել չէ կարելի,—ասում էին բոլորը։

Եւ մանաւանդ այդ բանաձևը դարձաւ համաժողովրդական, երբ Հեռաւոր-Արևելքի պատերազմը երևան հանեց մի շարք խոշոր պակասութիւններ, որոնց բնական հետևանքը եղան անօրինակ ամօթաբեր պարտութիւնները։

Այլ ևս պաշտպաններ չը մնացին հին ըէժիմի համար։ Դժգոհ էր գիւղացին, որ տանջվում էր հողի պակասութիւնից, ծանր հարկատուութիւնից և իրաւազուրկ իր գրութիւնից, դժգոհ էր ինտելիգենտ մարդը, որ տեսնում էր հայրենիքի օրէ-ցօր անկումը և կաշկանդված էր իր գործունէութեան մէջ ժողովրդի օգտին, դժգոհ էին և գիւսուորականն ու քաղաքագէտը, տեսնելով զօրքի անվերջ պարտութիւնները, դժգոհ էին գործարանատէրը, կալուածատէրը, վաճառականը և արհեստաւորը, որոնք տեսնում էին՝ թէ ինչպէս կենսական գործերի ղեկավարը են հանդիսանում բիւրօկրատական ատեանները, չունենալով ոչ մի պատրաստութիւն և ոչ մի իրաւունք դրա համար։

Այդ ընդհանուր դժգոհութեան շրջանում շատ բնական էր, որ կեանքի ամեն մի բացասական երևոյթ, ամեն մի նոր սև գիծ և աղէտ ծառայում էին այն նպատակին, որ աւելի ու աւելի լուսաբանէին եղած դրութեան ապիկարութիւնը և սնանկութիւնը։

Ամեն վատ բան վերագրվում էր հնին և ամեն լաւ բան սպասվում էր նորից։

Այդպիսի հանգամանքներում ծնունդ էր առել և մի այնպիսի բանաձև, թէ «որքան աւելի վատ լինի ներկան, այնքան աւելի լաւ կը լինի գործի համար», որովհետև մարդիկ աւելի ևս կը զզուեն ներկայից և կը ձգտեն դէպի ապագայ լաւագոյնը։

Եւ հասկանալի է, որ երբ երևան եկան քաղաքական բողոքի առաջին ճաճանչները, հասարակութեան մէջ սկսեց նկատվել համակրական տրամադրութիւն դէպի նրա բողոքող առաջադիմական գործողները։

Այդ համակրական տրամադրութիւնը ընդարձակվելով դարձաւ տիրապետող, և վերջապէս հասան օրեր, երբ կեանքի դրութեան կարգադրողները և ուէրները դարձան բողոքողները և յեղափոխական տարրերը։

Սակայն կենսարար և բեղմնաւոր գործունէութեան հետ միասին նոր գործունեայ խաւերը հանդէս բերին մի շարք բացասական երևոյթներ, որոնք սեացրին և վարկաբեկեցին ազատագրական շարժումը հասարակութեան աչքում։ Այն սարսափելի սխալները, այն անաջող գործելակերպերը, որոնք հանդէս եկան նոր գործողների շրջաններում, տակնուվրա արին հասարակական հայեացքները և հոգեբանական նրա վերաբերմունքը դէպի նոր կեանքի սպասելիք բարիքները։

Եւ ահա սկսեց պատրաստվել հող նոր դժգոհութեան և նոր բողոքի համար, որոնք այս անգամ ուղղված էին արդէն կեանքի նոր գործողների և նոր ղեկավարների դէմ։ Եւ անշուշտ անարժան և վատահոգի գործողների շնորհիւ սկսեցին վարկաբեկվել և ազնիւ գործողները և ամբողջ ազատագրական շարժումը։

Եւ եթէ առաջ ամեն մի բացասական երևոյթ կեանքի մէջ, ամեն մի սև գիծ և աղէտ վերագրվում էին հին ըէժիմի գործողներին, այժմ սկսեցին այդպիսիները վերագրվել արդէն նոր ըէժիմի ղեկավարներին։ Եւ այն աղաղակը՝ թէ «այսպէս ապրել չէ կարելի», որ լսվում էր առաջ հին ըէժիմի գործողների հասցէին, այժմ լսվում է նոր գործողների վերաբերութեամբ։ Եւ «որքան աւելի վատ, այնքան աւելի լաւ» նախկին բանաձևը, որ առաջ գործ էր դրվում ուժեղացնելու ատելութիւնը դէպի հինը և ընտելացնելու մարդկանց մտքերը դէպի մի ելք նոր կեանքի համար, այժմ նոյն բանաձևով գործելակերպը մեր կեանքի օրերում գցում է միայն նոր գործողների վարկը և խլում համակրողների շարքերը նոր հոսանքներից։

Դա մի ազէտալի երևոյթ է, մի սոսկալի դրութիւն, որը ապարդիւն է դարձնում ազատագրութեան գործի համար կատարված բազմամեայ ջանքերը և մեզ նորից դնում այն ստոր կէտի վրա, որից մենք բարձրացել էինք արդէն զգալի չափով։

Հասարակական գործողները պէտք է վերջապէս ըմբռնեն իրերի լուրջ դրութիւնը և միջոցներ ձեռք առնեն նիւթ չը տալու ըէակցիային ուժեղանալու նոր գործողների սխալների և թերութիւնների շնորհիւ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վանից, փետրվարի 6-ից, ամերիկացի յայտնի միսիոնար դոկտ. Ըէյնօլդսը իր մի նամակում, ի միջի այլոց, հետևեալն է գրում այդտեղ տիրող սովի մասին.

Վանում ներկայումս հայերի տառապանքը խիստ մեծ է, և տարակոյս չը կայ, որ բացարձակապէս անխուսափելի սովամահի պիտի ենթարկվեն շատերը, չը նայած որ գաւառում գտնվող պաշարի քանակը, եթէ կարելի լինէր գնել, հաւանականօրէն կը բաւէր ամբողջ ազգաբնակութեան սրնունդի համար։ Տիրող թշուառութիւնն անկարելի է երևակայել, և ազգաբնակութեան մեծ մասն այժմվանից իսկ չէ կարողանում իր ուտեստի համար անհրաժեշտ հղածը գնել։ Դրութիւնն աւելի պիտի վատթարանայ, քանի եղանակը առաջանայ։

—

Կ. Պոլիս, 14 մարտի

Թիւրքաց երկաթուղիները յունաց երկաթուղու հետ միացնելու առիթով ներկայացված յունական նոտան աջողութեամբ կը պսակվի։ Մինչդեռ սերբական միջնորդութեանը թիւրքերը արգելքներ են դնում, պնդելով թէ Աղրիական երկաթուղագիծը վտանգաւոր է Թիւրքիայի համար ռազմական տեսակէտից, որովհետև անցնում է սահմանի մօտով և զինուորական յատուկ պաշտպանութիւն է պահանջում։

Պաշտօնապէս յայտարարված է, որ Աթէնքի թիւրքաց դեսպան Բիֆադբէյը նշանակվում է Լօնդօնի դեսպան, իսկ Լօնդօնի դեսպանատան խորհրդատու Արդուլլահ-Համիդ բէյը՝ Մադրիդի թիւրքաց դեսպան։ («Հ. Դ.»)

—

«ԲէՄԵ»-ը հաղորդում է, որ կոմս Լ. Ն. Տօլստոյը հրաժարվում է իր յօբելեանը կատարելուց։

Տեղական տնտեսութեան մասնաժողովի նիստին, երբ քննվում էր զեմստվային բարենորոգման հարցը, մամուլի ներկայացուցիչների մուտքը արգելվեց։

Ապրիլի 22-ին Պետերբուրգի դատաստանական պալատում երկրորդ անգամ կը քննվի բանւոր պատգամաւորների խորհրդի գործը, որովհետև այժմ գտնվել են խորհրդի անդամներից մի քանիսի հետքերը։

Դրիգօրիյ Պետրովի պատուին հայկերոյթ կազմելուն համար տուգանքի են ենթարկված՝ թատրօնական կլուբի վերատեսուչ Ի. Պոտապէնկո—1000 ր. և ժուրնալիստ Բումանով—500 ր.։

(«Բ.»)

—

Կ. Պոլսից հեռագրում են «Կօր. Բիւրօյին», թէ վերջին ժամանակներս կատարվում են հայերի բազմաթիւ ձերբակալութիւններ, որոնք կապ ունեն ոստիկանութեան յայտնագործած վերջին դաւադրութեան հետ։

Նոյն լրագրին հեռագրում են Կ. Պոլսից. «Գէշօվը հաղորդեց դեսպանութիւններին և Բ. Դուան, թէ բուլգարական նոր կառավարութիւնը խստագոյն միջոցներ է ձեռք առել, որ այլ ևս բուլգարական չետաներ չը կազմվեն Բուլգարիայում և չանցնեն սահմանը։

—

Բագու, 13 մարտի

Երէկ, գիշերվայ ժամը 9-ի մօտերը, Մոլոկանսկի սլոբոդա կոչված տեղում առաջացաւ ուժեղ պայթում, որը բարեբաղդաբար մարդկային զոհեր չունեցաւ։ Քննութիւնը պարզեց, որ սայլական Բաբայեվի բնակարանի պատուհանի փեղկում դրված է եղել մի ռումբ, որից և պայթուն առաջացաւ։ Կարծում են, որ պայթումը առաջացրին ռումբի ոյժը ստուգելու նպատակով։ („Т. Л.“)

—

Մէչեղի-Սէր, 10 մարտի

Մարտի 9-ին զգացվեց երկրաշարժ, խուլ որոտումից յետոյ. շարժը հարաւից-հիւսիս էր. տեսեց 10 վայրկեան։

Ներսէս

—

Վիէննա, 13 մարտի

Ֆրանց-Յովսէփ կայսրը բոլորովին առողջացաւ թեթև մրսածութիւնից և իրան շատ լաւ է զգում։ («Հ. Դ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՉԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՑԻ ԴԻՒԱՆԱՏՆԻՑ

—

Ի նկատի առնելով, որ «Մշակի» այս տարվայ յունվարի 13-ի և 25-ի № № 9-դի և 19-դի մէջ տպագրված էին թղթակցութիւններ այն խաստով թէ, շնորհիւ բժշկական օգնութեան բացակայութեան Դանձակի նահանգի Կայաբաշ, Զաֆարաբադ և Զարքենդ հայկական գիւղերում սաստիկ զարգացել է սիֆիլիսը և որ նոյն նահանգի Կօզլու գիւղում երևացել է մի ինչ-որ անծանօթ տարափոխիկ հիւանդութիւն, Դիւանատունը անհրաժեշտ է համարում յայտնել հետևեալը.

Արէշի և Նուխու գիւղական բժիշկների տուած զեկուցումներից յայտնվում է, որ Կայաբաշ գիւղում, բոլոր սիֆիլիսով կասկածվող բնակիչներին բժշկական քննութեան ենթարկելուց յետոյ, յայտնվել է, որ միմիայն երկու հիւանդներ կան այդտեղ՝ ամուսինը և կինը։ Իսկ նոյն Կայաբաշ գիւղի ուսումնարանի աշակերտների մէջ, որոնց, Թղթակիցը ասելով, սիֆիլիսի սաստիկ տարածվաց լինելու պատճառով, ուսուցիչը ստիպված է եղել աշխատանքների ժամանակ երկու մասի բաժանել՝ վարակվածների և ոչ-վարակվածների, սիֆիլիսով և ոչ մի վարակված չէ գտնվել։ Նոյնպէս և Արէշի գաւառի Զարքենդ (Նուխու գաւառում Զարքենդ անունով գիւղ չը կայ) և Զաֆարաբադ գիւղերում սիֆիլիսով վարակված և ոչ մի դէպք չէ գտնվել։

Ինչ վերաբերում է այն տեղեկութեանը, թէ Նուխու գաւառի Կօզլու գիւղում մի ինչ-որ անծանօթ վարակիչ հիւանդութիւն է երևացել, այդ մասին էլ կարևոր ենք համարում ասել, որ Նուխու գաւառական բժիշկ Տէր-Օսիպովը, այդ հիւանդութիւնով բռնված հիւանդներին քննելով, գտել է, որ դա ազիքային տիֆ է, որով չորս ամսվայ ընթացքում հիւանդացել են ընդամենը 97 մարդ, որոնցից 65-ը կատարելապէս առողջացել են և 18-ը մեռել։

Այդ հիւանդութեան զարգանալու և տարածվելու գլխաւոր պատճառները, բժշկի կարծիքով, այդ գիւղի բնակիչների անտեսական զրութեան անբաւարար լինելն է և սանիտարական պայմանների պակասութիւնը։ Այդ վարակիչ հիւանդութեան առաջը առնելու և նրան մի տեղում միայն սահմանափակելու համար հարկաւոր միջոցները արդէն ձեռք են առնված. բժիշկը մի ֆելդշեր է թողել հիւանդութեան վայրում, որպէսզի մշտական բժշկական օգնութիւն հասցնի հիւանդներին և հսկի, որ ցոյց տրված սանիտարական միջոցները ճշտութեամբ գործադրվեն։

ՍՏՕԼԻՊԻՆԻ ՃԱՌԸ

(Շարունակութիւն և վերջ *)

—

Կառավարութիւնը համոզված է, որ անկարգութիւն առաջացնելու ամեն տեսակ փորձերը խափանելով և անխնայ վերջ դնելով նրանց ֆիզիքական ոյժով, նա պարտաւոր է իր բարոյական ամբողջ ոյժը լարել՝ երկիրը վերածնելու հիմքի հողմատար քարերից, և այդ պէտք է անել առանց շինութիւնը երերելու, այսինքն կարգ ու կանոն և բարեկեցութիւն հաստատել գիւղերում և շրջաններում։

Ահա գիւղի աղաղակող կարիքը։ Ոչ ոք չի ժխտի, որ այն տնական հասարակութիւնների անդամների շահերը, որոնք միացած են միմեանց հետ հողի միացեալ տիրապետութեամբ, չեն կլանում նոյն գիւղի շահերը բարեկեցութեան հարցերի նկատմամբ, և որքան մեծ է գիւղը, նոյնքան սակաւ են բաւարարութիւն ստանում բարեկեցութեան շահերը։ Մեր խոշոր գիւղերը, մեր երկաթուղային շէները ինչ-որ քաոս են ներկայացնում իրանցից, ինչ-որ բնակատեղիների կուտակում, առանց կարգ ու կանոնի և բարեկեցութեան որեէ նշանների։

Սակայն բացի այն շահերից, որոնք սահմանափակվում են շինական մշտական ապրանքակութեան տնտեսութեամբ, գիւղի և դաստակերտների այն կողմում կան ուրիշ շահեր ևս, որոնք մարդկանց միացնում են միմեանց հետ։ Ռուսի, բացի այն նախագծից, որ ընդառաջ է գնում առաջին պահանջին, բացի շէների կառավարութեան նախագծից, մինիստրութիւնը պէտք է դիմէր բաւարարութիւն տալու այն կարիքներին և շահերին, որոնց ես արդէն յիշատակեցի։

Այդ շահերը, որ վերաբերում են վարչական մանր ծառայութիւններին, որոնց կարիք ունի շրջանի իւրաքանչիւր բնակիչը, կայանում են զանազան տուրքեր վճարելու, զինուորական ծառայութիւնը կատարելու, ոստիկանական սկզբունքներ ձեռք առնելու, ազգաբնակութեամբ խիտ տեղերում կարգ մտցնելու ծառայութիւնների մէջ։ Այդ բոլոր պահանջներին, բոլոր բարեկեցիկ պետութիւնների մէջ, բաւարարութիւն է տալիս վարչական մանր միութիւնը (мелкая административная единица)։ Մեզանում այդ միութիւնը՝ շրջանը կրում է գիւղացիական դասային բնաւորութիւն, բայց հարկ է թէ արդարացի լինի մի դասի մէջքին բարձել գիւղի բոլոր բնակիչների կարիքները։ Այդ հանգամանքն էլ ստիպեց մինիստրութեան՝ շրջանային պարտականութիւնները, տուրքերի վճարելը դնել բոլոր այն անձանց վրա, որոնք տէր են որևէ անշարժ կայքի այդ շրջանում, բայց միևնոյն ժամանակ բոլորին էլ անխտիր հակեցնել շրջանային կառավարութեան գործին։ Բայց որովհետև բաւականաչափ հարուստ երկիր չունենք մենք, որպէսզի զուգընթացաբար և միաժամանակ կարելի լինի և մանր զեմստվային միութիւն պահպանել, մինիստրութիւնը մտադիր է այդ վարչական մանր միութեան վրա դնել նաև զեմստվային մի քանի ֆունկցիաներ և գաւառական զեմստվոյի յանձնարարութիւններից մի քանիսը։

Միևնոյն ժամանակ պէտք է նկատեմ, որ մինիստրութիւնը յամենայն դէպս պնդում է, որ անհրաժեշտ է ունենալ ամուր և հաստատուն վարչական մանր միութիւն, թէկուզ և հիմված ընտրողական սկզբունքի վրա, սակայն նա ոչ մի դէպքում չէր կարող հաշտվել բացառապէս մի զեմստվային միութիւն ստեղծելու մտքի հետ, որի, իբրև պատահական ֆունկցիայի վրա, վարչական մի քանի յանձնարարութիւններ դրվէին։ Կառավարական օրինագիծը բղխում է ուղղակի հակառակ շէնքից, դրա մէջ տեսնում է կարգ ու կանոնի անհրաժեշտ գրաւականը և այդ կազմութեան մէջ հոմանիշ է եւրօպական բարեկեցիկ պետութիւնների մեծամասնութեան հետ։

Շրջանի այդ նախագծի հետ զուգընթաց, դուք պէտք է քննէք նաև կառավարական գաւառամասերի կօմիսարների նախագիծը, որը սերտ առնչութիւն ունի Պետական Դուման տուած և արդէն քննվող տեղական դատարանի նախագծի հետ։ Ապա վարչական-զեմստվային մանր միութեան գոյութիւնը անհրաժեշտօրէն ստիպում է վերաքննութեան ենթարկել զեմստվային ներկայացուցչութեան և զեմստվային ցէնզի հարցը, որ ինքնին շահեկան է։ Համարեա բոլոր զեմստվային ժողովները իր ժամանակին յայտնեցին մինիստրութեանը հողային ցէնզը իջեցնելու անհրաժեշտութեան մասին։ Կառավարութիւնը համապատասխան նախագիծ ոչ առաջին, ոչ էլ երկրորդ Դումային չը ներկայացրեց, բայց սկզբում մտադրվում էր զեմստվային ներկայացուցչութիւն հիմնել հողային ցէնզով, անշարժ կայքի տիրապետութեան ցէնզի վրա, յարմարեցնելով նրա ատիճանաւորութիւնը (градація) հարկային ցէնզի հետ։ Սակայն զեմստվային գնահատման աշխատանքների ժամանակ քննութիւնը մինիստրութեան այն համոզման բերեց, որ անհրաժեշտ է կանգ առնել նախկին սկզբունքների վրա, այսինքն այնպիսի ցէնզի սկզբունքների վրա, որ պայմանաւորվում է հողի որոշ տարածութեան տիրապետութեամբ կամ համապատասխան ստացուածքով։

Ցամենայն դէպս, պարոններ, ես երբէք չեմ թագցրել և չեմ էլ թագցնում այժմ, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի պնդել, որպէսզի զեմստվոյում գոյութիւն պահպանէ աւելի կուլտուրական և աւելի կրթված, զեմստվային աշխատանքի աւելի ընդունակ տարրի, այսինքն տեղական հողատէրերի ազդեցութիւնը և նշանակութիւնը։

Վերջապէս դուք պէտք է քննէք կրկին մի շատ կարևոր խնդիր ևս. դա խոշոր քաղաքները ինքնուրոյն զեմստվային միու-

*) Տես «Մշակ» № 57.

թիւնների վերածելու հարցն է։ Այդ հարցը չէ կարելի ուշացնել, որովհետև որքան ուշ, այնքան դժուար կը լինի կապակցեալ խոշոր քաղաքների և զեմստվոների փոխադարձ յարաբերութիւնները։

Դրանով, պարոններ, աւարտվում է այն ծրագիրը, որ առաջարկված է ձեր քննութեան, որ պէտք է քննվի ձեր ձեռքով առաջիկայ չորս շաբաթվայ ընթացքում։ Ես մտադիր եմ աշխանը կրկին գումարել խորհուրդ՝ զեմստվոների իրաւասութիւնը ընդլայնելու և նիւթական իրաւունքի հարցերը նախնական կերպով քննելու համար։

Այժմ ես ձեզ կառաջարկէի չորս ժամանաժողովների բաժանվել, համաձայն իմ ծրագրում առաջ բերված չորս խոշոր խնդիրների։ Խորհրդում նախագահելու իրաւունքը ես յանձնում եմ իմ օգնական սենատոր Կրիժանօվսկուն. բայց բոլոր այն դէպքերում, երբ սկզբունքային կարևորագոյն հարցեր կը քննվեն, ես մեծ յօժարութեամբ կը մասնակցեմ ձեր աշխատանքներին։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Կովկասեան զինուորական-նահանգական դատարանին են յանձնված 1) Կօսօ-Մօլլա Օմար-օղլի, որ մեղադրվում է 1907 թ. օգոստ. 28-ին Նոր-Բայազէտի գաւառի «Այրիջա» տեղի մօտ Զալէվսկի և Նաբի-օղլի պահակներին զինված դիմադրութիւն ցոյց տալու մէջ, 2) Նախիջևանի գ. ընակիչներ Թէմուր Քերբալայ Խաղօքէրիմ-օղլի և Հէյդար Քերբալայ Պիր Կեատան Կուլի-օղլի, որոնք մեղադրվում են 1907 թ. փետրվարի 5-ին Երևանի նահ. Սալտախ գիւղի մօտ ուրեադնիկ Պիչուլինու վրա կրակելու մէջ, 3) Սղնախի գ. Անագի ատանուէր Գէօրգի Դարչաշվիլի և գիւղացի Նիկոլայ Կաջրիշվիլի, որոնք մեղադրվում են 1907 թ. դեկտ. 2-ին Սղնախի ընակիչ Լուկա Մօսուլօվի տան վրա յարձակում գործելու մէջ։

(«Т. Л.»)

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Հինգշաբթի, մարտի 13-ին, Հալաբարի թատրօնում, Հալաբարի հայ դրամատիկական խումբը խաղաց Իբսենի «Ապահարզանի սիրարբիներ» 3 գործ. կօմեդիան։

Պիէսան ըստ էութեան հեռու է կրթիչ նշանակութիւն ունենալուց. սակայն հեռաքրքրութեամբ գրաւում է հանդիսականների ուշադրութիւնը իր նիւթի կօմիկականութեամբ և խաղի սահունութեամբ։ Ժամանակակից եւրօպական կեանքի սիրարբիներով լի ամուսնութեան մի պատկեր է տալիս Իբսենը իր յիշեալ գրուածքով։

Ներկայացումը անցաւ շատ աջող։ Պ. Արմէնեան իր շնորհալի խաղով, դերի հեռևողականութիւնը պահպանելով, գեղեցիկ տպաւորութիւն թողեց և անսահման զուարճութիւն պատճառեց հանդիսականներին։ Հաճելի էր տեսնել պ. Միրզոյեանի Բուրդանիօվը։ Լաւ էին տ. Զարէյ, Իփէկեան. բաւարար տարան իրանց դերերը Տէր-Առաքելեան, օր. Ծուրինեան։ Օր. Ադամեան իր դերի մէջ չէր այդ գիշեր։ Եւ հանկանալի է. դահլիճի ընդարձակ դատարկութիւնը երևի վշտացնում էր յարգելի դերասանուհուն։

Թատրօնը շատ ցուրտ էր։

Ե.

ԱՐՓԻԱՐԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

—

Բաքու, 12 մարտի

Ներփակ հաճեցէք գտնել 50 ռուբլի և արձանագրեցէք իբր իմ մասնակցութիւնս Արփիարեանի յիշատակին մահարձան մը կանգնելու համար բացուած հանգանակութեան։

Մարմնայի գիրհզմանատունը, ուր այնքան խոնջէնքէ, ոգորումներէ, անձկութիւններէ, բարոյական ու նիւթական չարչարանքներէ յետոյ կը հանդչի այսօր մեր մեծ բարեկամը, այն կէտերէն մին է հիմա, ուր հայութեան մտածումը պիտի դառնայ ցաւով ու ափսոսանքով։ Ուխտատեղի մը ստեղծուած է այնտեղ անոնց համար, որոնք մեր ժամանակակից պատմութեան հանգրուանները պիտի սերտեն և մեր մտածման աղբիւրները պիտի ուսումնասիրեն։

Լևոն Բաշալեան

Ծանօթ. խմբ.—Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 116 ռուբլի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բաթում, 10 մարտի

Այստեղ վախճանվեց կարճ և ծանր հիւանդութիւնից յետոյ տեղական իգական գիմնազիայի VIII դասարանի աշակերտուհի Շուշանիկ Մինասեանցը 19 տարեկան հասակում։ Վաղաժամ մահը գերեզման տարաւ մի նորատի կեանք, որ ապագայում մեծ յոյսեր էր խոստանում։ Դժբաղդ օրիորդի ծնողները ապրում են Միխայլովօ կայարանում, ուստի մարմինը այստեղից փոխադրվեց Միխայլովօ և այդտեղից մեծ շքով, երաժշտութեան նուագմամբ տարվեց Սուրամի հայոց եկեղեցին։ Ամբողջ 4 վերստ տարածութիւնը՝ Միխայլովօյից Սուրամ դագաղը տանում էին իրանց ուսերի վրա օրիորդները։ Պատարագից յետոյ թաղվեց տեղական հանգստարանում, իսկ հոգեհացի փոխարէն, հանդուցեալի դժբաղդ հայրը, մի 74 տարեկան ծերունի, նուիրեց 20 ռ. Սուրամի հայոց ուսումնարանին և 15 ռ. յօգուտ թիւրքահայ սովեալների։

Տեղական ռուսաց թերթում պ. Բուդօլֆ Շիման մի քանի հանգրկական խօսքերով, առաջ բերելով նաև Հոֆմանսթալի մի ոտանաւորը, գծագրում է հանգուցեալ ջահել աղջկայ պատկերը։ Առաջ ենք բերում հետևեալ կտորը.

«Զը նայած իր թոյլ մարմնակազմութեանը, Մինասեանցը մեծ աշխատանքով ճանապարհ հարթեց կեանքում իր համար և հաստատակամ դիմում էր իր ընդգծած դաղափարի ետևից։ Նրա բարի, քնքոյշ բնաւորութիւնը, նրա ոգևորված գաղափարական ձգտումները ստեղծեցին այն սէրը, որպիսին վայելում էր իր շրջապատող երիտասարդութիւնից։

«Մահվանից դեռ մի քանի օր առաջ, արդէն հիւանդ, նա ծրագիրներ էր մշակում կուրսերի գնալու։

«Ես գիտեմ,—ասում էր նա,—որ Պետերբուրգում ես կը մեռնեմ, բայց ես կերթամ, կերթամ անպատճառ... Ես կամենում եմ ուսանել և աշխատել»...

«Վաղաժամ մահը արգելք եղաւ նրան իրականացնելու իր ուխտած պլանները։

„Такъ падаетъ звѣзда съ небесъ безшумно.
Нѣтъ, духъ ея съ землею не былъ связанъ.
И отъ нея остался мнѣ лишь взоръ, Затмившійся передъ концомъ и слово,
Похожее на дуновенье вѣтра.
Послѣднее предъ тѣмъ, какъ стихнетъ онъ.“

«Հանգիստ ոսկորներդ, բարի ընկեր։ Քո յիշատակը միշտ վառ կը մնայ քեզ անսահման սիրող և նուիրված ընկերներիդ սրտերում»։

—

Բաթում, 12 մարտի

Մեր առաջն է Երևանի ս. Գրիգոր լուսաւորիչ եկեղեցու երէցփոխ պարոն Դ. Մ. Պապօվի 1907 թւի № 7 հաշիւը, տպագրված Երևանում 1908 թւին։ Հաշուի ճակատին դրված № 7-ը ցոյց է տալիս, որ 7 տարի շարունակ երէցփոխ է պարոնը և 7 տարի շարունակ տպագրութեամբ լոյս է ընծայում իր եկեղեցու մուտք ու ելքի հաշիւները։

Արժէ որ մեր եկեղեցիների երէցփոխները աշխատեն ձեռք բերել կարդալ, օրինակ առնել և հետևել նրան։ Եկեղեցուն նուիրված ամէն մի իր, եկեղեցուն ընծայված յատին կօպէկները, կատարված ծախսերը արձանագրված են ամենայն կարգաւորութեամբ, նուիրատուների անունները յիշված են ամենայն ուշադրութեամբ, մի խօսքով «հաշիւ» ասէն մի երեսից, ամէն մի տողից բուրում է երէցփոխի ճշտապահութիւնը, սրտացաւութիւնը, որի համար արժանի է համակրանքի։ «Հաշիւ» մէջ դուրս է բերել և մեր հոգևոր բարձր իշխանութեան անուղղակի վարմունքը տէր-Ռափայէլ քահանայի վերաբերութեամբ խիստ ընորոշ և ուսանելի գծերով։

«Հաշիւը» բաղկացած է 23—24 երեսից. առաջին երեսները նուիրված են հոգևոր Հայրիկի ջանքերին և հրահանգներին եկեղեցին պարզութեան մէջ դնելու և պահելու նկատմամբ։ **

—

Ցօլակ գիւղ (Երևանի նահ.), 10 մարտի

Մեր գիւղը, որ 80-ական թաւականներին կանօնաւոր ուսումնարան ունէր, այժմ միանգամայն զուրկ է կրթական որ և է հաստատութիւնից։ Թէ ժողովուրդը և թէ քահանան զուրկ են այդ մասին մտածելու շնորհքից և կարծես թէ սպասում են, որ դրսից պիտի գան իրանց կրթական կարիքների մասին մտածողներ։ Շ.

—

Զաքաթալա, 10 մարտի

Զաքաթալայի թէ հայ ժողովուրդը և թէ դպրոցի հոգաբարձութիւնը վերջերս խիստ զբաղված են տարօրինակ մի կտակի խնդրով։ Բանը նրանումն է, որ մի հայ իր մահվանից առաջ նօտարի մօտ արել է հետևեալ կտակը. Զաքաթալայում ունեցած իր թէ անշարժ և թէ շարժական կայքի արդիւնքով ապրելու է ցմահ իր կինը, իսկ նրա մահվանից յետոյ՝ բոլորը տեղական հայոց դպրոցի սեփականութիւնն է դառնում. բան է, եթէ կինը չը յարգէ, քանդէ այս կտակը և մարդու գնայ՝ զբվում է բոլորովին թէ տներից և թէ եկամուտից, որոնց տերը անյապաղ դառնում է դպրոցի վարչութիւնը։ Զահէլ կինը չէ խոնարհվել իր մարդու վերջին կամքի առջև։ Նա նոյն նօտարի մօտ, հոգաբարձութիւնից ծածուկ, 9 տարի ժամանակով տները կապալով իբր թէ տալիս է իր հարազատ հօրը և փողը կանխիկ լիովին ստանալուց յետոյ բարեկենդանին պսակվում է մէկի հետ...

Հոգաբարձութիւնը, լսելով այդ մասին, որոշեց անմիջապէս դատ բանալ կնոջ դէմ... Տեսնենք, ինչով կը վերջանայ գործը։

Տեղացի

—

Աղէքսանդրօպօլ, 11 մարտի

Մարտի 9-ին ս. Աստուածածին եկեղեցում վերջին անգամ հրաւիրված էին նոյն եկեղեցու ծխականները ընտրելու նոր երէցփոխ և հաստատելու 1908 թւի նախահաշիւը։ Մեր «սօցիալիստները» լցրել էին եկեղեցին, որպէսզի այստեղ էլ իրանց «մարդը» ընտրել տան։ Բայց և այնպէս երէցփոխ ընտրվեց Վ. Բարսամեանը, որը, ի ցաւ մեր «սօցիալիստների», ընդունել է այդ պաշտօնը։

Ծխական

—

Ուզ գիւղ (Սիսիանի գաւ.), 7 մարտի

Սիսիանի գաւառի Ուզ գիւղը, որ բաղկացած է 300 տնից, ուսումնարանից զուրկ է։

Առաջները այս գիւղի երեխաները յաճախում էին Ուզից 3—4 վերստ հեռու գտնվող Ղարաքիլիսա գիւղի ուսումնարանը։ Այդ հանգամանքն ունէր իր մեծ անյարմարութիւնները, և ուզեցիք մտածեցին իրանց համար յատուկ ուսումնարան ունենալու։ Հաւաքվեցին մի քանի բանիմաց անձեր և վճռեցին Ուզում ուսումնարան կառուցանել։ Այդ նպատակն իրագործելու համար՝ հաւաքեցին աչքի ընկնող մի գումար։ Բայց հէնց որ սկսվում էր ուսումնարանի շէնքի կառուցումը, գործի գլուխ անցան մեր «ազգասէրներից» մի քանի հոգի և... հաղիւ հաղ այժմ կարողացան 1—2 պատ բարձրացնել։ Գործը կիսատ մնաց։ Գիւղացիների հարցին, թէ ինչու չի շարունակվում շինութեան կառուցումը, այդ անձինք պատասխանում են, թէ փողը պրծել է...

Ներկայումս գիւղացիք չեն կարողանում յիշեալ «ազգասէրներից» հաշիւ պահանջել, որովհետև նրանք «ազգասէրներ» են, իսկ իրանք՝ նրանց հպատակները...

Լաւ կը լինէր, եթէ օտարութեան մէջ գտնվող ուզեցի երիտասարդները օգնութեան գային այս գործին և միահամուռ ոյժերով վերջացնէին իրանց հայրենի գիւղի կիսատ մնացած ուսումնարանի շէնքի կառուցումը։

Ուզեցի

—

Ասխաբադ, 8 մարտի

Մարտի 6-ի առաւօտեան ժամը 5-ին, զինուորական ինժենէր կապիտան Մալիցկու բնակարանում հեռևեալ սոսկալի եղեռնագործութիւնն է կատարվում։

Մալիցկին նախ և առաջ սպանում է իր երիտասարդ կնոջը, գեղեցիկ, քսան տարեկան հասակում, փոքրիկ 9 ամսական երեխային, վիրաւորում է չորս տարեկան որդուն, որի աչքին է դիպել գնդակը, և վերջը գործում է ինքնասպանութիւն։

Երբ որ մտան ննջարանը, որտեղ պատահել է այդ դէպքը, երեք դիակներ ընկած էին մահճակալների վրա. կնոջ երեսի արտայայտութիւնը հանգիստ էր, կարծես թէ քնած լինէր։

Հանգուցեալների ծանօթների և բարեկամների ասելով, ոչ մի ընտանեկան վէճ չէն ունեցել և ապրում են եղել շատ սիրով. թէ ինչից դրդված այդպիսի եղեռնագործութիւն է կատարել Մալիցկին, բոլորիս համար մնում է անյայտ։

Ամբողջ գիշերը Մալիցկին զբաղվում է իր գործերով և գիշերվայ ժամը 12-ին կանչում է իր ծառային, պատուիրելով գնալ և հանգստանալ, որովհետև առաւօտեան ժամը 9-ին հարկաւոր է գնել մի քանի հարկաւոր իրեր, որովհետև հիւրեր պիտի գան։

Առաւօտեան ժամը 5-ին ծառան լսում է հրացանի ձայներ. իսկոյն և եթ վեր է կենում, գնում դէպի ննջարանը, բայց դուռը ներսից փակ է լինում. դռան վերևի մասի ապակիով նայելով տեսնում է սարսափելի տեսարան և դուռը կոտրում մտնում է ննջարան, որտեղ տեսնում է ժահճակալների վրա ընկած երեք դոհեր, իսկ յատակի վրա ընկած չորս տարեկան երեխան աղեկտուր կերպով արտասում է։

Դէպքի տեղը գալիս են պատշաճաւոր իշխանութեան անձինք, բարեկամներ և ծանօթներ և սկսում են հարց ու փորձ անել վիրաւորված երեխային։ Երեխան սկսում է արտասուելով նկարագրել, և ամբողջ հանդիսականներ. նրա լացին մասնակցում են։ Երեխան ասում է. «Հայրիկը սպանեց մամա, յետոյ մայրիկիս, յետոյ փոքրիկ Անդրուշին և յետոյ ինքն իրան»։

Մալիցկին թողել է մի նամակ, որի մէջ գրված է հետևեալը. «Զը կարողանալով տանել այլ ևս ինձ վրա դրված ծանր պարտականութիւնը, վերջ եմ տալիս կեանքիս. և որպէս զի իմ մահվանից յետոյ ընտանիքս չը մնայ առանց խնամքի, անտէր և անօգնական, ես սպանում եմ ամբողջ ընտանիքս»։

Ինչից դրդված է կատարված այս եղեռնագործութիւնը, շատերի համար մնում է փակ։

Վիրաւորված երեխան այժմս գտնվում է հիւանդանոցում և դրութիւնը անյուսալի է։

Մի.ք. Դանիլեցեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երևանի երկաթուղագծի վրա Արաքս և Էջմիածին կայարանների միջև ճանապարհը փչացել է, այնպէս որ Երևանի գծի վրա երկաթուղիների երթևեկութիւնը կանգ է առել։ Հաւանօրէն կանոնաւոր երթևեկութիւն կը վերակվի մարտի 16-ից ոչ շուտ։

◆ Վաղը, կիրակի, առ. ժամը 11-ին, հայոց առաջնորդարանում նշանակված է մի խորհրդակցութիւն, առաջնորդ Գարեգին արքեպ. Սաթունեանի հրաւէրով, հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչներից, քննելու համար Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովի օֆիցէրական ծառայութեան 50-ամեայ յօբելեանին հայ հասարակութեան կողմից մասնակցելու հարցը։

◆ «Т. Л.»-ը արժանահաւատ աղբիւրներից տեղեկացնում է, որ Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի օֆիցէրական ծառայութեան 50-ամեայ յօբելեանը պաշտօնական բնաւորութիւն չէ կրելու և ունենալու է սոսկ մասնաւոր, զուտ ընտանեկան բնոյթ, ուստի և ոչ մի յօբելեանական ժամանակոյց չի հաստատվի։ Այն հասարակական, կրթական, բարեգործական և այլ հաստատութիւնները, որոնք կը ցանկանան մասնակցել յօբելեանին, իրանց շնորհաւորութիւնները Փոխարքային մատուցանելու են պատասխանում։ Մարտի 17-ին Թիֆլիսի քաղ. դումայում, ի միջի այլոց, քննվելու է այն հարցը, թէ ինչ կերպ յարմար է մասնակցել կոմսի յօբելեանին։

◆ Վաղը, մարտի 16-ին, կը բացվի Նիկարիչ Արշակ Ֆեթվաճեանի պատկերների ցուցահանդէսը։ Պատկերները պատկանում են նկարների այն տեսակին, որ յայտնի է ակվարէլ անունով կամ հայերէն ջրանկար։ Պատկերների թիւը հասնում է 80-ի։ Պատկերահանդէսը կը շարունակվի մօտ մի ամիս։ Մուտքը նշանակված է 30 կոպէկ, իսկ մանուկների և զինուորների համար էկս։ Ցուցահանդէսը զետեղված է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան երկու դահլիճներում։ Նեկայ ցուցահանդէսը լաւ առիթ է մեր հասարակութեան համար՝ ծանօթանալու Ֆեթվաճեանի վրձինի կատարած նոր առաջադիմութիւնների հետ։

◆ Թիֆլիսի նահանգի մատակարարական յանձնաժողովը ներկայումս քննում է սովեալ ազգաբնակութեան համար ալիւր գնելու հարցը։ Այն գիւղերը, որոնց իշխանութիւնը չէ վաւերացրել, դիմում են յանձնաժողովին, միջնորդելով ալիւր տալ իրանց ևս, սակայն նրանց միջնորդութիւններին բաւարարութիւն չէ տրվում։ Այն շինական հասարակութիւնները, որոնք ցանկանում են ալիւր ստանալ, պէտք է յանձնաժողովին ներկայացնեն վկայականներ գաւառապետից և հաշտարար միջնորդից, որ իրանք յիրաւի կարիք ունեն մատակարարական օգնութեան։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, հասարակական գրադարանի դահլիճում կը կայանայ Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերութեան կովկասեան բաժանմունքի նիստը, ուր կը կարդացվի բաժանմունքի 1907 թ. գործունէութեան տարեկան հաշիւը։ Նոյն նիստում Տակայշվիլին կը զեկուցանէ Քութայիսի նահանգի Շօրօպանի գաւառի Բօրի գիւղում գտնված հնագիտական իրերի մասին։

◆ Վաղը, մարտի 16-ին, Զուբալովի ժողովարանի տանը բժիշկ Ե. Ֆեօդորով կը դասախօսէ «Ճահճային տենդը (մալիարիա) և նրա հետևանքները»։ Սկիզբն է առաւօտեան ժամը 11 ½-ին. տոմսակների գինը 5—10 կ.։

◆ Ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ մեր երկրում ֆիլոկսէրան զարգանում և իբրև հետևանք այդ բանի ամերիկեան խաղողի որթ է շարունակ պահանջվում կովկասեան բուծարաններից, որոնք չեն կարողանում բաւարարեցնել տեղական պահանջներին, հողային բարեկարգութեան և երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը վճռել է հէնց այս տարվանից ընդլայնել գոյութիւն ունեցող բուծարանները։

◆ Երէկվանից Թիֆլիսի Ш կլասիքա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՌԵՆԵՐԶՈՒԹԻՒՆԸ

—

Այս ձգտումը, որով համակվել է վերջին ժամանակներս հայ ինտելիգենտների մի փոքր և անշան խումբ, ձգտումն, որ, գլխաւորապէս, առաջ է եկել մեր յեղափոխական կազմակերպութիւնների գործունէութեան յուսախաբ արդիւնքներից, առիթ է տուել Թիւրքահայ գրող պ. Մ. Նաթանեանին մի ուշագրաւ յօդուած գրել «Արաքս» հանդէսի մէջ և որակել այդ ձգտումը «Յոռեերջութիւն» անունով։

Մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել «Մշակի» մէջ դատապարտելու այն ուղղութիւնը, որով ճգնվում է ի չիք դարձնել ազգային այնքան մեծ զոհողութիւններով ձեռք բերված հայոց հարցի միջազգային իրաւունքը. այդ ուղղութիւնը մենք դատապարտելի և վնասակար ենք համարում։ Այսօր ուրախ ենք, որ պ. Մ. Նաթանեան ուրիշ տեսակէտներով դատապարտում է նոյն ուղղութիւնը և ձգտումը։

Իր յօդուածի մէջ Նաթանեան ցնորք է համարում Թիւրքիան թիւրքիացիներով վերանորոգելու գաղափարը։ Նրա յօդուածի ընդհանուր իմաստի հետ մենք համամիտ լինելով, բացի մը քանի կէտերից, հարկ ենք համարում այստեղ բերել նրանից մի քանի գլխաւոր կտորներ։

Յոռեերջումի տարափոխիկ ջանք մը և ձգտում մը, որ կը տեսնուի օրերս և առհասարակ պիտի մը նման ճարակիլ կը սկսի հասարակական կեանքով զբաղողներուն մէջ, վերջին ծայր կարևոր և ուշագրաւ է։

Հայութեան այդ մասը, կը թուի թէ, այլևս յուսահատ՝ իր ճակատագիրը, իր քաղաքական դժբաղդ կացութիւնը յեղափոխական ճամբայով փոփոխելու ճիգերէն, յուսահատ՝ ազգային հարազատ ոյժերէն բղխած գործունէութեամբ իր գաղափարին հասնելէն, այլապէս օտար—չըսելու համար օտարոտի—քաղաքականութեան մը սկիզբ կը դնէ, և առիկա՝ մեր տակրութեան բովանդակ խոստովանութեամբ և հազարաւորներու արիւններով նուիրագործուած պահանջներու ինքնակամ զոհողութեամբ։

Այդ հատուածը, Հայաստանը հայերով բարեկարգեալ տեսնել անհնարին համարելով, Թիւրքիան թիւրքիացիներով վերանորոգելու գաղափարին կը հակի։ Երիտասարդ Թիւրքերու փայփայած կամ կեղծած գաղափարը, զոր անոնք տասնեակ տարիներէ ի վեր այնքան ճարպիկութեամբ մը ի լուր աշխարհի կը հրատարակէին, անով նոյն իսկ շանթածներ կընէին, բայց երբէք մտքերնէն չէին անցուցած այսօրինակ գործնական ընթացք մը տալ անոր։

Մեր յեղափոխական կոչուած գործունէութեանց ցարդ ունեցած անհեռատես և երբեմն նոյն իսկ հակազգային ընթացքը, պատճառած մեծամեծ վնասները, մինչև իսկ կոտորածները, հայրենասիրական և յեղափոխական դիմակին տակ գործուած աղտոտ և ամօթալի շահատակութիւնները, դրամաշորթութիւնը, մարդասպանութիւնը, անազնիւ մարտը և դեռ ինչեր. բոլոր անոնք պատճառ եղան արդարև եռանդուն, բայց անպատրաստ ու կոյր հետևողներուն հիասթափութեան և յուսախաբութեան։ Եւ որովհետև ինչ որ պէտք էր սպասել յեղափոխութենէն՝ ցարդ մեր յեղափոխութիւն անուանը շահագործողները չտուին իրենց, և ոչ միայն չտուին, այլ և տեսնուեցաւ որ ցուցուած վստահութեան ևս արժանի չէին. իրենց սրտին բովանդակ արհամարհանքով կարհամարհեն զանոնք։ Բայց ինչ որ ցաւալին է, կարհամարհեն ամենոր հետ և բուն անկեղծ հայ յեղափոխական ձգտումները, ընդհանուր ազգայնական, հայրենասիրական զգացմունքը՝ որպէս վնասակար, ապարդիւն և իսօպի։

Ահա սխալներէ դժգոհ մոլորութեան մէջ սուզելու տխուր օրինակ մը. ճիշտ ինչպէս հայկական առածը կըսէ, «Ջրէն ելնել՝ ջրհեղեղը իմնալ»։

Աւելորդ կը համարինք պատճառներուն խորը մտնել։ Անկեղծ հայրենասէրներուն և լուրջ մամուլին խորհրդածութեան և հոգածութեան առարկան է ան։ Ու կը վերադառնամ այդ կացութեան ծնունդը և կամ աւելի ճիշտ՝ այդ կացութեան ամբողջութիւնը եղող այն նոր վնասակար և օտարոտի ուղղութեան վրայ, որ աւելի ճիշտ պիտի ըլլայ անուանել՝ որքան եռ կը կարծեմ՝ յոռեերջութիւն։

Արդարև եթէ հայութիւնն ու անոր դատը շահագործող գործունէութիւնք հայ ոյժերը, յոյսերն ու հաւատը միաւորեցին, յոռեերջութիւնը, որ մատնիչ կը նենգ, անոնց սպանութիւնը եւ թաղումը պիտի ըլլայ՝ առանց փոխադարձ արդիւնքի մը։

Ինչնելէ առաջ թէ որքան օգտակար և գործնական է յոռեշրջականներուն գաղափարը—հայ ոյժերը սպաս դնելով թիւրքական դատին, առանց ցեղի ու կրօնի խտրութեան միահամուռ աշխատութեամբ թիւրք պետութիւնը բարեկարգելով ընդհանուր թիւրքիան զօրացնել—խոստովանինք սակայն, որ այս շարժումը երիտասարդ թիւրքերուն տասը-քսան տարուայ ամուլ, վերացական գործունէութեան պարապին մէջ միս-միանակ, կարևոր և յիշատակելի յաջողութիւնը պիտի ըլլայ։

Դեռ երէկ և այսօր հայու արեան մէջ թաթախած և կարմրած ձեռքը լղուրատող թիւրքերուն կողմէն՝ երկրին բարեկարգութեան համար առանց ոևէ դրական քայլի, անոնցմէ կոտորուող՝ հալածական գեղուր ազգին զաւակներն են, որ երեսնէն դէպի զանոնք կը դարձնեն, որպէս փրկութեան միակ ապահով տարբերու։ Նոյն իսկ եւրոպական մամուլին մէջ հայանուն ստորագրութեամբ յօդուածներ արդէն սկսած են դատապարտել անկեղծ հայրենասէրներուն ազգային ձգտումը, լուրջ ճիգերը որպէս ոչինչ, ունայն, յիմար և վնասակար։ Կովկասի մէջ հայերէն վերնագրով, հայ տառերով, հայ լեզուով և ստորագրութիւններով պաշտօնաթերթ մը անգամ ունին՝ «Երկրի Ձայնը», վերէն-վար երիտասարդ Թիւրք հոտոտ Հոն՝ Թիֆլիսի մէջ հինաւուրց ծանօթ ամսագիր մը անգամ իր հովանաւորութեան տակ առած է երիտասարդ Թիւրքերու այդ հայագիր օրգանը՝ Դաշնակցութիւնը ոչընչացնելու փափաքով*)։

Այս կէտի առիթով պէտք է դիտել տանք, թէ հայ ոյժերը թիւրքական դատին սպաս

*) Ասիկայ զարմանալի չթուի թերևս, եթէ նկատի առնենք, որ հայկական յեղափոխական գործը, վատաբեղոց առջի գործունէութիւնք են Կովկասի մէջ ծնունդ առին «Հնչակ», «Դրօշակ» անուններու տակ։ Եւ այսօր, երբ ատոնք կը տկարանան, այնտեղէն կելնէ նորէն թէ զանոնք և թէ, աւաղ, ճշմարիտ գործունէութեան և հայ ազատագրութեան գաղափարը սպանել ձգող յոռեերջութիւնը։

ԱՅԺՍՆՈՒ ՑՈՂ ՎՂՈՏՈՂՎՍՑ

ԴՎՎԺՎՍՈՅՈ ԴՎԺԻՈՏՅՈ

դրգռանվագ-մեն Տ. բժ. դրամեղեցաց

Հրատարակչատան դեպ տվեցուցան տարեօրյա իսկնանաց մեջտեղ վրանեմ ի մեղրվեան տարեցաց նանեցեալ ի ՅՐԱԳԻՐ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԵՂ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԵՂԵՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԵՎ ՎԱՃԱՌՎԱԾ ԳՐՔԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Գրիգորյան Հայրապետի հրամանաբերությամբ Հայկական Մամուլի տեղերում հրատարակված և Հայկական Մամուլի տեղերում վաճառվող գրքերի անվանացանկ։

Գրքերի անվանումները դասավորված են ըստ հեղինակների։ Գրքերի մասին տրված տեղեկությունները հետևյալ կարգով են՝ գրքի անվանումը, հրատարակության տարեթիվը, գրքի չափը, էջերի թիվը, գինը։

Գրքերի գինը նշված է հայերեն դրամով։

Գրքերի գնումը կարելի է կատարել Հայրապետական Գրադարանի հասցեով։

Գրքերի գնումը հնարավոր է նաև Հայրապետական Գրադարանի գրավաճառանոցներից

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անգլիական առաջարկութիւնը եւ եւրոպական կոնցերտը.—Եւրոպական կոնցերտին մասնակցող պետութիւնները եթէ ոչ բոլորովին օպտիմիստ կերպով, բայց կատարեալ հանգստութեամբ են վերաբերվում անգլիական առաջարկութեանը՝ Մակեդոնիայի համար առանձին լիազօր նահանգապետ նշանակելու մասին։

«Köln. Zeitung» լրագրում Բերլինից ներշնչված հեռագրի մէջ արտայայտվում է գերմանական տեսակէտը այդ հարցի վերաբերմամբ։

Գերմանական կանցլերի հայեացքներն արտայայտող լրագրի կարծիքով, անգլիական առաջարկութիւնը ստիպված կը լինի անցնել երկու երկարատև շրջան, որպէսզի կարողանայ ձեռք բերել եւրոպական կոնցերտի և սուլթանի համաձայնութիւնը։ Այդ պատճառով չէ կարելի յուսալ, որ շուտ կիրագործվի անգլիական առաջարկութիւնը։ Սակայն, միւս կողմից, «Köln. Zeitung» չէ կարծում, որ այդ նախագիծը, որի նատակն է շուտափոյթ խաղաղութիւն մտցնել Մակեդոնիայում, լուրջ արգելքների հանդիպի ումէ կողմից։ Եթէ այդ հարցի վերաբերմամբ եւրոպական պետութիւնների կարծիքների մէջև մինչև անգամ տարաձայնութիւններ երևան եկան, դա այնուամենայնիւ առիթ չէ տալիս, որ այսուհետև ևս կոնցերտը խախտվի։ Անգլիական առաջարկութիւնը ոչինչ յետին մտքեր չունի. այդ պատճառով բոլոր պետութիւնները հակամէտ են վստահութեամբ վերաբերվելու նրան։

Վիէննայի քաղաքական շրջաններում ամենևին չեն զարմացել անգլիական առաջարկութեան վրա, տեսնելով որ դա բրիտանական տեսակէտի յայտնորդական եղրակացութիւնն է մակեդոնական հարցի մասին։ Այստեղ հաւատացած են, որ պետութիւնները պատշաճաւոր ուշադրութեամբ կը քննեն անգլիական առաջարկութիւնը, բայց միևնոյն ժամանակ այն հաստատմունքն է տիրում, որ նա խոչընդոտների կը հանդիպի այն մարդկանց կողմից, որոնք Մակեդոնիայի համար լիազօր նահանգապետ նշանակելու միտքը շատ երկիւղալի են համարում։

Մանաւանդ որ Մակեդոնիայում կայ նահանգապետ յանձին Հիլմի-փաշայի, որի պաշտօնանկութիւնը անկարելի է առանց պետութիւնների ընդհանուր համաձայնութեան։

Վիէննայի քաղաքական շրջանների կարծիքով, սուլթանը չէ կարող համակրել անգլիական առաջարկութեանը, և ոչ բոլորը պետութիւնները կը վստահանան պաշտպանել նրան, որպէս սուլթանի գերագոյն իշխանութիւնը խախտող, որի անխախտելիութիւնը պարտաւորվել են պաշտպանել մակեդոնական ըէֆորմներ մտցնել ուզող պետութիւնները։

Անգլիական մամուլը, ի հարկէ, պաշտպանում է սրը Էդուարդ Գրէյի առաջարկութիւնը։ «Times» լրագիրը ծաղրում է Վիէննայի դիպլոմատների անհեռատեսութիւնը, որոնք կարծում են, որ բրիտանական մինիստրների յայտարարութիւնները երկու պալատներում ճարտարախօսական վարժութիւններ են տան մէջ ժամանակ անցկացնելու համար։ «Ոչ,—ասում է լրագիրը,—պետութիւնները պարտաւոր են գործել, չը բաւականանալով միւրցշտէգեան պրոգրամի վրա արված կարկատաններով։ Պետութիւնների արձագանքը անգլիական առաջարկութեան մի փորձաքար կը լինի եւրոպական կոնցերտի կենսունակութեան և նրա պէտքականութեան իրագործելու իր նպատակը, նոյնպէս դրանով կարելի է փորձել կառավարութիւնների անկեղծութիւնը»։ Տիտոնիի ճառը այդ կողմից ամենևին չը գոհացրեց «Times»-ին։ «Մեզ հարկաւոր են փաստեր, և ոչ խօսքեր»։

«Standard» գտնում է, որ բոլէն առաջարկութեան համար անպէտ է ընտրված։

«Բացի բրիտանական կառավարութիւնից, ոչ ոք Եւրոպայում չէ հաւատում մակեդոնական ըէֆորմներին և ոչ մի պատասխանատու մինիստր դրա համար չի տայ ոչ փող, ոչ մարդիկ։ Իտալիայից և Ֆրանսիայից մենք կարող ենք սպասել միայն զուտ պլատոնական համակրութիւն։ Ռուսաստանը, ընդհանրապէս, շատ կարելի է, և հակամէտ է աջակցելու մեզ, բայց այդ երեք պետութիւններից ոչ մէկը չի վստահանայ այդ առիթով մինչև անգամ դիպլոմատիական վէճ սկսել Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի հետ,—ուր մնաց պատերազմ...»։

«Daily Graphic» լրագիրը բրիտանական առաջարկութիւնը համարում է ուլտիմատում մինիստրներին։ «Անգլիային զրկուեցրեց եւրոպական կոնցէրտի խաղացած կօմեդիան, և նա վճռեց հարցը կարուկ կերպով դնել։ Շատ կարելի է և վատագոյնը է սուլթանի վրա ճնշում գործ դնելը, բայց կոնցէրտի խախտումն աւելի ևս վատանգաւոր է։ Թող պետութիւններն ընտրեն»։

Աւստրիան ռուսական նոր նախագծի մասին.—Անգլիական առաջարկութեան հետ միաժամանակ Վիէննայում քննվում է ռուսական նոր առաջարկութիւնը, որ վերաբերում է մակեդոնական հարցին։

Ռուսական նախագիծը ի նկատի ունի առանձին բարձր կօմիսարի հիմնելու պետութիւնների ներկայացուցիչներից՝ մակեդոնական վարչութեան բոլոր ճիւղերի վրա հսկելու համար, կցելով այդտեղ և զօրքեր ուղարկելու կարգադրութիւնները չէանների դէմ կուռելու համար։

Այդ միտքը մեծ համակրութիւն է գրանում Վիէննայում, քան անգլիական առաջարկութիւնը։ Բալկանեան թերակղզու վրա, Վիէննայի կարծիքով, խիստ շատ վաւելող նիւթ կայ և վտանգաւոր է մի այնպիսի այրող նախագծով ասպարէզ գալ, որպիսին լիազօր նահանգապետի նշանակումն է, այն ինչ ռուսական առաջարկութիւնը, մի քանի մանր փոփոխութիւններով, չի շօշափի ոչ ոքի ինքնասիրութիւնը և չի բորբոքի ոչ ոքի կիրքը։

Գերմանական կայսրի նամակը ծովապետ Տվիդմուտին.—Գերմանական Վիլհելմ կայսրը նորերս մի նամակ է գրել անգլիական ծովապետ Տվիդմուտին, և ահա այդ նամակը անգամին աղմուկ է հանել Անգլիայում և առհասարակ ամբողջ Եւրոպայում։ Խօսում են այն մասին՝ թէ արդեօք իրաւունք ունի՞ մի որևէ պետութեան թագաւոր նամակ գրել մի ուրիշ պետութեան մինիստրին։ Ահա այդ նամակը շարունակում է յուզել ամբողջ եւրոպական մամուլը։ Օրինակ՝ անգլիական մի քանի լրագիրներ այն կարծիքն են յայտնում, որ օտար պետութիւնների միապետների և անգլիական մինիստրների միջև չը պէտք է որևէ յարաբերութիւն լինի առանց դիտութեան արտաքին գործերի մինիստրութեան, և պահանջում են նամակի հրատարակութիւնը։ Անգլիական լրագիրների մեծ մասը համաձայն է այն բանում, որ այնքան կարևորութիւն չունի նամակի բովանդակութիւնը, որքան այն փաստը, որ Անգլիայի հետ մրցող մի պետութեան անմիջական գլուխ նամակով դիմում է անգլիական մինիստրին և այն էլ մի այնպիսի փափուկ հարցի առիթով, որպիսին է ծովային զինաւորութիւնների աճումը։ Նոյնպէս պախարակում են Վիլհելմ կայսրին, որ նա այնպէս արհամարհում է դիպլոմատիական աւանդութիւնները, լորդ Տվիդմուտին իր անտեղի շատախօսութեան համար, իսկ «Times» լրագրին, որը բացել է այդ ամբողջ պատմութիւնը, պախարակում են, որ մի այդպիսի ծանր պատասխանատուութիւն է վերցրել իր վրա։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

13 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կովկասեան 1-ին հրացանաձիգ բրիգադայի կառավարիչ գ.-մ. Վօլակին նշանակված է Կարսի շրջանի զինուորական նահանգապետ։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Եապօնական նաւով Սախալինից ժամանեց եապօնական սահմանապահ մասնաժողովը, որի գլուխ կանգնած է գեներալ Օսիմը։ Նաւահանգստում ընդունեցին ռուսաց մասնաժողովի նախագահը և զինուորական ու քաղաքացիական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Մասնաժողովը մնալու է ընդամենը տասը օր, որի ընթացքում տեղի կունենայ մտքերի փոխանակութիւն։

Արտաքին

ԲԵՐԼԻՆ։ «Զիւդ-Դէօյտշէ-Բէյխս-կօր.» լրագիրը գրում է, որ Գերմանիան բալկանեան քաղաքականութեան խնդրում շատ բան կարող է անել։ Իրօք իր սեփական շահերը չեն, այլ միւս պետութիւնների կարիքներին բաւարարութիւն տալու ցանկութիւնը, որ զբաղեցնում է Գերմանիային իր ազատ կամքով միջամտել այդ քաղաքականութեան։ Այդ ցանկութեանը ռուսական մամուլը կարող է կենդանութիւն տալ և իր կողմից էլ աջակցել (?)։

«Ֆրեմդենբլատը» քննելով Բիլօվի և Իզվոլսկու ճառերը, ասում է, որ Բիլօվը այն հայեցակէտն ունի, որ բալկանեան հարցի քննութիւնը զգուշութիւն է պահանջում. պէտք է անշուշտ ուշադրութեան առնել, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան դեկավարը մարտի 11-ին առիթ չը գտաւ ասպարէզ գալ բալկանեան գործերի բացատրութիւններով։ Իզվոլսկու ճառերում պարփակվում է կառավարական ծրագիրը, որ երկու լոզունգով է արտայայտվում—ներքին վերածնութիւն և հաստատուն բէալ քաղաքականութիւն։

Բէյխստագում Բիլօվը կրկին ճառ արտասանեց պրուսական ընտրողական իրաւունքի մասին։ Բիլօվի կարծիքով, թոյլատրելի չէ, որ պետական հաստատութիւնը դուրս գայ իր իրաւասութեան սահմաններից և ջանայ աղդել առանձին պետութիւնների սահմանադրութեան վրա։ Վերջում Բիլօվը ասաց.

«Բէբէլի այն խօսքերը, թէ գժբաղդութիւն չի լինի, եթէ պրուսական պետութիւնը անհետանայ և եթէ Գերմանիան մի խոշոր պարտութեամբ հանրապետութիւն դառնայ, ինչպէս Ֆրանսիան, ամենանկեղծ ցնծութիւն են պատճառում գերմանական ժողովրդի բոլոր թշնամիներին։ Պրուսիայի բաղդը միշտ և անքակտելի կերպով կապված է գերմանական կայսրութեան վիճակի հետ։ Այդ միութեան վրա է հիմնված ազգի ապագան. նրան երբէք չեն կարող կործանել ոչ արտաքին յարձակումները, ոչ ներքին ճգնաժամերը։ Այդ մասին ես յայտարարում եմ ազգու և դրականապէս երկրի և օտար պետութիւնների առաջ»։ (Բուռն ծափահարութիւններ)։

ՊԷՏԿԻՆ։ Լուրեր են պատում, որ Կուանտունեան նահանգում խոշոր անկարգութիւններ են ծագել այն պատճառով, որ չինական կառավարութիւնը «Տացումարու» նաւը յանձնեց եապօնացիներին, վերջիններիս պահանջով։

ԲԵԼԳՐԱԴ։ Կառավարութիւնը սկուպշտինային յանձնեց Սերբիայի և Աւստրօ-Ունգարիայի միջև կնքված առևտրական պայմանագրի օրինագիծը։ Պետական խորհուրդը պայմանագիրը ընդունեց։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատ։ Պատասխանելով ուղղված հարցապնդման, Գրէյը ասաց, որ օտարազգի պետութիւններից և ոչ մէկը անգլ. կառավարութեանը չէ յայտնել, թէ ցանկանում է հրաժարվել Ալժէզիրասի կոնֆերէնցիայի արձանագրութիւններից կամ թէ փոփոխութեան ենթարկել նրանց։

ՏԱՆԺԷՐ։ Բարադից ստացված տեղեկութիւնների համաձայն, Աբդիւլ-Ազիզի եղբայր Զէկենիսը 2000 մարդով դիմում է հաբաւ. մի ուրիշ զօրաժաս, որին պաշտպանութիւն է ցոյց տալիս հզօր Շրադա ցեղը, դանդաղութեամբ մօտենում է Ֆէցին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ՈՒՌՈՒՕՑՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Ե. Կ. ԽՕՐՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Բ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Բ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Գնարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտ ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К-°
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—6



ԻՐԱԿԱՆ
ՄԻՋՈՑ
հազի, մրսելու, ոսկրացաւի, բրոնխիտի և գրիպպի դէմ։
Արդէն 20 տարուց աւելի հիանալի միջոց է համարված Ֆրանսիայում։ Իւրաքանչիւր տարի ծախվում է 1 միլիոն արկղիկ։ Ախորժ համ ունեցող այդ դեղամանները ծծելով կարելի է պաշտպանել իրան կոկորդի և բրոնխիտի բոլոր հիւանդութիւններից։
ԱՐԿՂԻԿԻ ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
«Պոնսելէ» պաստիլները ծախվում են բոլոր դեղատներում, դեղագործական մագազիններում և դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիսում։
(29, 15) 2—2

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Օլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—13

ԲԺԻՇԿ
Մեղիք-Էյնաթեան
Վեներական, միզասեռական և մորթու հիւանդութիւններ
Ընդունելութիւն 9—10 առաւօտ. 5—7 երեկ.
Կսենիեվսկայա փող. № 6, Վեստցէլ հիւրանոցի մօտ։
(Ի. հ. շ.) 30—29

Գոյքերը հրդեհից փոխադարձ ապահովելու Թիֆլիսի ընկերութեան
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, ներկայ տարվայ մարտի 16-ին, ցերեկվայ ժամը 11-ին, քաղաքային դուման դահլիճում տեղի կունենայ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ներկայ մարտի 2-ին չը կայացածի փոխարէն, ուր կը քննվին այն բոլոր հարցերը, որ նշանակված էին մարտի 2-ին։
Միևնոյն ժամանակ վարչութիւնը պատիւ ունի ծանուցանելու պ. պ. անդամներին, որ ընկերութեան կանոնադրութեան § 27-ի համաձայն՝ նշանակված ժողովը, յամենայն դէպս, օրինաւոր կը համարվի, որքան էլ լինի անդամների թիւը։
(11, 15) 2—2

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. դեղագործների։—Ռուսաստանում թոյլատրված։
ՄԱՏԻԿՕԻ ՍՐՍԿՈՒՄ
Զգուշացէք կեղծումներից
Երկարամեայ և բազմաքանակ աջողութիւնները ապահովում են, որ նա կարուկ կերպով գործում է պերելոյի (հօնօրէյ) ժամանակ։ Կարճ ժամանակամիջոցում ՄԱՏԻԿՕՆ բժշկում է ամենայարատև արտահոսութիւնը։
ՊԱՀԵՍՏԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ
(15 և 30) 14—8

„ԳԵՂԱՐՈՒԵՍՏ“
Գրական-գեղարուեստական-երաժշտական պատկերազարդ հանդիսի
Ա. ԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
(Լոյս կը տեսնի մարտ ամսի 20-ին)
Ի. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՏԵՍԱԿԱՆԸ.
1. Էստետիքական խնդիրներ. ա. գեղեցկութեան գաղափարը—Գ. Լ.
2. Ուսումնասիրութիւն սօցիալիստ. էստետիկայի մասին Հ. Ռօլանդ Հօլստի. ա. Ի՞նչ է գեղեցկութիւնը—Բ. Իշխանեան.
3. Գեղարուեստական ստեղծագործութիւն պրոֆ. Օրշանսկու. ա. Նկարչութիւն և քանդակագործութիւն—Ի. Յարութիւնեան.
4. Աշխատանքը և ռիթմը—Խ. Սաժուէլեան.
5. Երաժշտութիւն և երաժշտ. ստեղծագործութիւն. (Օրշանսկու)—Ա. Թ.
II. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ.
6. Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան. ներածութիւն—Գ. Լ.
7. Վրաց թատրօնի անցեալը և ներկան (պատմական հայեացք)—Գ. Մելիքեան.
8. Թիւրք բանաստեղծութիւն ա. Սիրոյ երգիչներ—Տ. Զաւէն.
9. Մունէ Սիլլի (աշխարհաշէն. ողբերգու դերասանը)—Ա. Արմէնեան.
10. Նկարիչ Վարդան Մախոխեան—Ա.վօ.
III. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԳՐԱԿԱՆԸ.
11. Մարդագայլ (զրոյց)—Փափազեան.
12. Խաղաղ գիշեր, ազօտ լուսին.—Մուրացան.
13. Վահագնի ծնունդը (Բալլադա) Յով. Յովհաննիսեան.
14. *** (Բանաստեղծութիւն)—Յով. Թումանեան.
15. Կարօտ (արձակ)—Ա.ւ. Իսահակեան.
16. Հաբանաբերդ (Ղարաբաղի լեգենդներից)—Սուքէն.
17. Մենութեան երգեր. ա. Թաղումը, բ. Շէյքին, գ. Մահի երգը—Memento Mori
18. Երազ (բանաստեղծութ.)—Ա.ւ. Իսահակեան.
19. Գիշեր (բանաստեղծութ.)—Շ. Կուրղինեան.
20. Ներշնչումի երգերից—Մենորդ.
21. Անի (բանաստեղծութ.)—Է. Պոօշեան.
22. Հէյ սարեր ջան—Գրիգոր Սիւնի.
23. Գեղեցկութիւն (արձակ բանաստ.)—Ա. Զանեան.
24. Ծնորք (բանաստ.—Վ. Տէրեան.
25. Աշուն (բանաստ.)—Ոնոփրիոս Անոփեան.
26. Զան եար (բանաստ.)—Գասպար Իփէկեան.
27. Որոնումի յոյզեր (արձակ)—Մենորդ.
28. Յուղարկաւորութիւն (բանաստ.)—Ա. Զանեան.
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
29. Կոյսին. Անակրէոնից—Յար. Թումանեան.
30. Կոյսը. Paul-Remer-ից—Ա.ւ. Իսահակեան.
31. Ես օրրում եմ սէգն անտառի Բայրմօնտից—Միրաժ.
32. Բաբա-Մահիրի քառեակները—Փ. Թերլեմեզեան.
IV ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՒ ԴՊՐՈՑՈՒՄ.
33. Գեղարուեստական առարկաների դասաւանդ. մեր դպրոցներում.—Գ. Լ.
V ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԿԱՆ.
34. «Երգեր ու վէրքեր» Ա.ւ. Իսահակեանի—Գեղամ Արմէն.
35. «Արշալոյսի զոգանջներ» Շ. Կուրղինեանի.—Գ. Լ.
36. «Վերածնութեան մեղեդիներ» և «Գերբնակ. հիւանդութիւն».—Յ. Սօլովեան.
37. «Սև Թռչուն» Ա.ւ. Ահարոնեանի—Տ. Զաւէն.
38. Հայ գեղարուեստական մամուլը նախ քան «Գեղարուեստը».—Գ. Լ.։
39. Նկարչական ցուցահանդէսներ Թիֆլիսում.—Merkurius.
VI ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ.
40. Մոսկվայի գեղարուեստական թատրոնը.—Vikast.
41. Ընթացիկ կեանք. Հայոց թատրոն. Յօբելեաններ. Մանրալուր. Մեր կորուստները.
42. Քանդակագործ Ս. Մերկուրով—Գեղամ Արմէն.
VII ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
43. «Զեմ կրնայ» (հայ ժողովրդ. պարերգ)—Կօմիտաս վարդապետ.
44. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ».—Գր. Միրզայեան.
45. «Տաղ Ծննդեան».—Պարոյկ.
VIII ՊԱՏԿԵՐԱԶԱՆԴԱՍ.
46. Բեօկլին և Շտուկ և նրանց գործերը.—(առանձին թերթերով). զանազան նկարներ, զարդեր և վիներետներ 50-ի չափ (տեկստի մէջ).
XI ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.
47. Նամակ խմբագրութեան.—Շաւարշ.
48. Մեր ասելիքը. ստացված գրքեր. պօստարկղ.
X ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
Բաժանորդագրութիւնը շարունակվում է
(10 գիրքը) 10 ռուբլի, հատավաճառ 2 ռուբլի
Դիմել՝ «Գուտենբերգ», «Փարոս» և խմբագրութեան.—Тифлисъ, редакція «Гехаръ-вестъ».
1—1

Типографія „Экономія“ Авака Мугдусіанова съ С-ми. Большая Ванкская т. д. Семинаріи № 3.